

կենաց սերմանիցեն¹: 2 Եւ հրաժարեալ² ի նոցանէն հանդերձ աւգնակա-
նաւքն³, որոց առաջնումն Տիրայր անուն ի Խորձենական⁴ գաւառէն, եւ երկ-
րորդին Մուշէ⁵ անուն ի Նահանգէ Տարաւնոյ, որք էին սուրբք եւ զուարթա-
գոյնք, հանդերձ այլովք⁶ եւս սպասաւորաւք Աւետարանին, զոր չեմք բաւա-
կան ըստ անուանցն նշանակել: 3 Որովք⁷ յանձն եղեալ երանելին շնորհացն
Աստուծոյ, երթեալ իջաներ յՌոտաստակն⁸ Գողթան, յառաջին դաստա-
կերտն իւր: 4 Եւ անդ ընդելական սովորութեամբն ի կիր արկեալ զվարդա-
պետութիւնն՝ հաւասարութեամբն բարեպաշտին Շաբաթայ⁹, լի առնէր զգա-
ւառն ողջունիւ Աւետարանին Քրիստոսի. եւ կարգէր յամենայն գիւղս գաւա-
ռին դասս սրբոց վանականաց: 5 Որում եւ հասեալ ժամանեալ հայրաբա-
րուն Գտայ, որդւոյ Շաբաթայ առն քրիստոսասիրի, բազում սպասաւորու-
թիւն իբրեւ հաւասարի¹⁰ որդւոյ վարդապետին տաներ:

[ԺԴ]

1 Յայնժամ վաղվաղակի հրաման առեալ ի թագաւորէն՝ սկիզբն առնե-
լոյ զխուժադուժ կողմանսն¹¹ Մարաց, որք ոչ միայն¹² վասն դիւական սա-
տանայակիր¹³ բարուցն ճիւղադութեան¹⁴, այլ եւ վասն խեցքեկագոյն եւ խո-
շորագոյն լեզուին՝ դժուարամատոյցք¹⁵ էին: 2 Առ ի յարդարել եւ զնոցա հա-
րուստ¹⁶ ամացն¹⁷ ծնունդս առեալ՝ պարզախաւսս, հռետորաբանս, կրթեալս,
աստուածատուր իմաստութեանն ծանաւթս¹⁸ կացուցանէին:

1 *b* սերմանեցին / *c* ուղղ. սերմանիցե

2 *d* հրաժարեալք

3 *abcde*լ հանդերձ այլովք / *b* այլօք/ եւս / *d* եւ/ օգնականօքն. *յապաւ*. այլովք եւս

4 *c* Զորձենական

5 *c*լ Մուշեղ

6 *bc* այլօք

7 *բողորք*՝ որով *ուղղ*. որովք

8 *bc* առոտս տակն / *միւսն*. առոտս տանն. *ուղղում եւ*՝ յՌոտաստակն

9 *b* Շաբաթա / *c* Շաբաթու

10 *c* հաւասարի *ուղղ*. հաւատարիմ

11 *bc* կողմանն

12 *b* որք ունէին միայն

13 *c* սատանայական

14 *c* ճիւղադութին

15 *d*լ դժուարինամատոյցք

16 *վ* հարանց *փիւ*. հարուստ

17 *b* հարանց ամոյն / *c* հարաց ամոյն *փիւ*. հարուստ ամացն

18 *ade*լ ծնունդս *փիւ*. ծանօթս